ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 56-61-85. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

№ 07/24.2/2025-13
«19» 04 2013թ

Ձեր №.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր՝ 10.04.2013թ. 199-ի 7 գրության՝ տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական secretariat@mineconomy.am և press@mineconomy.am էլեկտրոնային փոստերի հասցեներով 2013 թվականի փետրվարի 5-ին որևէ հարցում «Ինֆորմացիայի ազատության կենտրոնից» չի ստացվել, ուստիև հարցումը չէր կարող անպատասխան մնալ:

Միաժամանակ, տեղեկացնում ենք, որ նախարարության վերը նշված էլ. փոստերով ստացված բոլոր նամակներին՝ լինի դա հարցում, դիմում, թե Զանգվածային լրատվության միջոցի (ԶԼՄ) ներկայացուցիչների կողմից հանդիպում կազմակերպելու առաջարկ կամ տեղեկատվություն ստանալու խնդրանք, պարտադիր ընթացք է տրվում:

Էլեկտրոնային հարցումների և դիմումների հաշվառման վերաբերյալ տեղեկացնում ենք՝

1. Իրականացվում է արդյո՞ք ՀՀ էկոնոմիկայի նախարարության ստացած էլեկտրոնային հարցումների և դիմումների հաշվառում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական էլեկտրոնային փոստով ստացած հարցումների և դիմումների հաշվառումն իրականացվում է նախարարության քարտուղարության կողմից, սակայն, հաշվի առնելով, որ նախարարությունն աշխատում է բաց և թափանցիկ ձևաչափով և նախարարության պաշտոնյա անձերի (նախարար, փոխնախարարներ, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների պետեր)՝

Կատարող՝ Օվսաննա Կարապետյան
010 597206

էլեկտրոնային փոստերի հասցեներով (տեղադրված www.mineconomy.am կայքէջում) նույնպես ստացվում են նամակներ և հարցումներ, էլեկտրոնային բոլոր հարցումների և դիմումների կենտրոնացված հաշվառում չի իրականացվում:

Հաշվառումն իրականացվում է մասնավորապես secretariat@mineconomy.am և press@mineconomy.am էլեկտրոնային փոստերի հասցեներով ստացված հարցումների և դիմումների մասով:

2. Եթե այո, ապա էլեկտրոնային հարցումների և դիմումների հաշվառումն իրականացվում է առանձին, թե ընդհանուր:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի՝ press@mineconomy.am և քարտուղարության secretariat@mineconomy.am էլեկտրոնային փոստերի հասցեներով ստացված հարցումների և դիմումների հաշվառումն իրականացվում է ընդհանուր:

3. Քանի՞ էլեկտրոնային հարցում և դիմում է ստացել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը 2012 թվականին (եթե էլեկտրոնային հարցումների և դիմումների հաշվառումն իրականացվում է առանձին, ապա խնդրում ենք տրամադրել հարցումների քանակն առանձին, դիմումներինը՝ առանձին):

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և հասարակայնության հետ կապերի բաժնի՝ press@mineconomy.am էլեկտրոնային փոստով 2012 թվականի ընթացքում ստացվել է 100 դիմում և հարցում, իսկ secretariat@mineconomy.am էլեկտրոնային փոստով 2012 թվականի ընթացքում՝ 213 դիմում և հարցում:

Հարգանքով՝

ԷՄԻԼ ՏԱՐԱՍՅԱՆ